ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Գանդոնի բանտերը :

Չինաստանէն խրկուած նամակ մը Գանդոնի և մասնաւորապէս իր ահաւոր բանտերուն վրայ հետևեալ տեղեկութիւնները կու տայ :

“ Գանդոնի դիւրասահ ճամբաները քալելէն յոգնեցայ : Վեց շաբթուան մէջ քաղքին ամէն հետաքրքրական բաները տեսայ . փողոցները անանկ խրաբու նման են , որ և ոչ տեղացիք կրնան մտքերնին պահել . անոր համար իրենք ալ երբոր երկայն ատեն պիտի պտըտին , միշտ քաղքին յատակագիծը հովահարներնուն վրայ կպուցած կը քալեն : Թէ որ մէկը առաջնորդ մը առնէ քաղքին արևելեան մասին համար , ասիկայ արևմտեան կողմը հասնելուն պէս՝ բոլորովին ճամբան կը շփոթի : Անոր համար մենք մեր յաջորդ ճանապարհորդաց դիւրութեանն համար՝ ետևէ ենք որ գլխաւոր փողոցներուն անգղիարէն , գաղղիարէն և չին լեզուով անուններ դրուին :

„ Գաղղիացիք մեծաւ աշխատութեամբ իրենց բնակած շէնքերը կը նորոգեն : Մարդինոյ գնդապետը ունի իրեն յատուկ բնակարան մը՝ հանդերձ մատուռովն ու բանտովը : Չինաց տըները թեթև նկարքով մը գեղեցիկ կերպով կը զարդարուին :

„ Քաղքին արևելեան կողմը կ'իյնան պաշտօնական մեծամեծ պալատները : Թէպէտ քսան անգամ ալ մէկը այս ընդարձակ անապատանման շէնքերս երթայ պտըտի , սակայն դեռ կարգաւորեալ կերպով չկրնար տեսնալ անոնց մէջի եղած բաները : Գանձարանը ամենէն բազմամարդ թաղերէն մէկուն մէջն է , որուն ետևի կողմը եղջերուներու փակարան մը կայ :

„ Դուռ եկած ատեննիս՝ շատ անգամ հարսնիքի գացող տեղացւոց կը հանդիպինք , որոնք ընծաներով կ'երթան , ձեռքերնին բռնած խորոված խոզ , կարկանդակներ , տեսակ տեսակ շաքարեղէններ , և կողովներ՝ որոնց մէջ ինչ ըլլալը չիմացուիր :

„ Հարաւային կողմն են վաճառանոցները , ուր որ կը ծախուին ժողովըրդեան ամէն տեսակ հարկաւոր եղած բաները : Հոն կը ծախուին նաև արևով չորցուցած ուտելիքներ , զորոնք Չինք շատ կ'ախորժին . ինչպէս օրինակի համար մուկը , որ իր երկայն պոչէն մէկէն կը ճանչցուի : Խորոված խոզ մը կը տեսնաս . մէյ մ' ալ ուշադրութեամբ նայելու որ ըլլաս , կ'իմանաս որ շուն է : Այնպէս աս տեսակ կենդանիներ ողջ ողջ կը ծախեն կողովներու մէջ դրած : Հոստեղի խոզերը աւելի ճերմակ և աւելի համով են քան Եւրոպա ծախուածները , և Չինք զանոնք խիստ մաքուր կերպով ու խնամքով կը սնուցանեն :

„ Ճամբանիս շարունակելով , ատաղձագործի խանութ մը կը հասնինք , որուն անմիջապէս դիմացը պզտիկ հրապարակ մը կայ , ուր որ մահուան դատակնիքներն 'ի գործ կը դրուին : Անոր մէկ անկիւնը քանի մը խաչ կայ անտաշ ծառերու բուներէ շինուած , որոնք մահապարտաց համար կը գործածուին : Երկու տարուան մէջ Եհէհ՝ Գանդոնի վայրենամիտ քաղաքապետը եօթանասուն հազար մարդ սպաննել տուաւ այս տեղւոյն մէջ : Իսկ խաչերուն գալով , անոնք կը գործածուին ան մահապարտայ համար , որ երկարատև տանջանքներով սպաննուելու դատապարտուած են : Անոնցմէ մէկուն կապուելով սպաննուեցաւ ապստամբ զօրավարներէն մէկուն կինը : Այս ապստամբ մարդը Վամբոայի պատերազմէն վերջը փախչելով , խեղճ կինը Եհէհին ձեռքն ինկաւ ու այս չարաչար մահն ունեցաւ : Նախ ստինքը կտրեցին . վերջը ճակատը սկսան քերթել և բանի մորթը քաշելով ինչուան երեսին վրայ իջեցուցին . յետոյ մարմինը կտոր կտոր ըրին : Այս տխուր տեսարանը անգղիացւոցմէ ալ տեսնողներ

եղան ։ Արդեօք խեղճը այս դառն տանջանաց մէջ ո՞ր վայրկենին վերջին շունչը տուաւ ։ Սոյն խաչերէն մէկուն վրայ ուրիշ կին մըն ալ կապեցին ու յօշատեցին մարմինը՝ իր երիկն սպաննած ըլլալուն համար ։ Այս սպանութեանց մանրամասն դէպքերը ներկայ եղող անձինք պատմեցին ինծի ։

„ Մահապարտները թէ որ կարողութիւն ունենան քալելու՝ խմբովին մահուան տեղը կը տարուին, ապա թէ ոչ՝ պատգարակով կը տանին զանոնք ու հրապարակին մէջ տեղը կը դնեն ։ Դահիճներն ան ատեն զանոնք մէկ կարգի վրայ կը շարեն, և ուժով մը կը զարնեն անոնց կռնակին՝ որ ստիպուին գլուխնին ծռել և վզերնին առջև երկընցընելով պատրաստ կենան գլուխնին կտրուելու ։ Մէյ մ՝ ալ ան միջոցին դրօշակով մը գլխատման նշանը կը տրուի ․ որով առանց ուրիշ հրամանի սպասելու, կոտորածը կը սկսի ։ Դահիճները անանկ ճարտարութեամբ հարուածը կու տան, որ ոչ երբէք կրկնել հարկ կ'ըլլայ ։ Երեք մանրերկրորդ բաւական է գլուխ մը կտրելու համար ․ մէկ վայրկենի մէջ հինգ դահիճ հարիւր հոգի կը սպաննեն ։ Աւելի ժամանակ կ'անցընեն դահճի օգնականներն դիակները դագաղներու մէջ դնելու համար, մանաւանդ որ երկու դիակ մէկ դագաղի մէջ կը դնեն, որպէս զի պարապ մնացած դագաղները գողնան ։ Գլուխները սնտուկներու մէջ դրած կ'առնեն կը տանին ․ իսկ արիւնաշաղախ գետնին հողը պարարտութեան տեղ կը ծախեն ։

„ Աս արհաւրաց տեղէն հեռանալով, կ'երթանք հոն ուր որ ընդհանրական քաղաքապետին պալատին աւերակները կան հիմա ․ այս շէնքը բոլոր մերձակայ տեղերովը աւերակաց կոյտ մը եղած է մեր թնդանօթներուն հարուածներէն ։

„ Երկու օր անցուցինք բանտերը պտըտելու համար ։ Բեքուէ հրովարտակ մը հանեց, որով ընդհանուր ազատութիւն կը շնորհուէր անոնց, որոնք որ օտարաց հետ հաղորդակցութիւն ընելով՝ յանցաւոր սեպուած էին ․ ուստի իրեք պաշտօնէից յանձնուեցաւ որ աս ազատութիւնը ինչպէս որ պէտք է նէ 'ի գործ դնեն ։ Առաջին բանտին մէջ երկու բորդուգալցի կային միայն ։ Երկրորդ օրը իրիկուան դէմ՝ մտանք բուն բանտը, յիսուն կալանաւոր ալ հետերնիս, և մանտարին բանտապետները ։ Առանց մասնաւոր յօժարութիւն մը զգալու մանրամասն նկարագրելու համար ինչ որ ան բանտերուն մէջ տեսանք, հարկ է կարելի եղածին չափ համառօտ տեղեկութիւն մը տալ ։ Բաւական չէ միայն ըսելը թէ այն բանտեալ ողորմելիները բանտերուն մէջ փակուած՝ անօթութենէ կը մաշին ու որդերուն կերակուր կ'ըլլան, այլ թէ այնպիսի սարսափելի բաներ կան, որ մարդկային լեզուով անհնարին է բացատրելը ․ և ահա այսպիսի խեղճ տեսարաններ երկու օր աչքերնուս առջևն էին ։

„ Չինաց բանտերը այլ և այլ պզտի պզտի սրահներով կը ձևանան, որոնք արտաքին պատով շրջապատած չեն ։ Աս սրահներուն չորս կողմը գազանաց գառագիղներու նման վանդակներ պատած են ։ Վանդակներուն ձողերը երկաթէ չեն, հապա պամպուի ամուր ցողուններով, և անանկ խիտ իրարու հետ հիւսած են, որ հազիւ թէ թող կու տան լոյսը մէջէն անցնելու ։ Սովորական կալանաւորները ցորեկ ատեն սրահին մէջ կը կենան ։ Ոտքերնին երկաթէ շղթայով կապած է, և շատերը ձեռքերնին ալ շղթայ ունին ։ Վանդակները այնչափ ցած դիրքով են, որ եթէ շղթայով կապուած չըլլային կալանաւորները, կրնային դիւրաւ վար ցատքել ու փախչիլ ։ Կապիկներու փակարանաց մէջի եղած հոտը՝ կը տիրէ նաև աս բանտերուս մէջ ալ, որ խիստ անախորժ կու գայ ամէն ներս մտնողներու ։

„ Լորտ Էլճինին ներկայութեամբը երկրորդ բանտին սրահներէն մէկը մտնելու ելանք ․ և որովհետև ցորեկ ատեն էր, կը կարծէինք որ վանդակ-

ները պարապ են։ Բայց հառաչելու նուազ ձայն մը լսուեցաւ, և մէջերնէս մէկը վանդակին մօտեցաւ որ աւելի լաւ լսէ։ Մէյ մըն ալ իբրև թէ երեսը հնոցի մը մօտիկցուցած ըլլար՝ ետ քաշուեցաւ, գարշահոտութեան չդիմանալով, որ երևակայութենէ դուրս բան է։ Բանտապետներուն մէկէն հրաման տրուեցաւ որ այդ խորշը բանան. բայց անոնք, ինչպէս որ Ղինաց սովորութիւնն է, 'ի սկզբան դէմ կեցան. ան ատեն զինուորներուն հրաման եղաւ որ բռնի բանալ տան անոնց։ Բ.ին խորշին խորը մարդ մը կար, որուն կուրծքը մկները կրծեր էին. իսկ ասդիս անդին նեխոտած ողջ մարմիններ կային։ Բանտապետը կարծես թէ զարմացած կը նայէր մեր այսպէս ընչին բանի մը համար այլայլելուն վրայ. բայց մենք զինքը ստիպեցինք այդ տառապեալ արարածները դուրս հանելու։ Մէկն որ այսպիսի տեսարան մը տեսնելու ըլլայ, կրնայ արդեօք կենացը մէջ մոռնալ զայն։ Բ.այս բանտեալներուն վրայ ալ մարդկութեան նշան մը չէր մնացած, այլ մէյմէկ կմախք դարձեր էին։ Թէ որ վէրքեր չունենային, մարդ չէր կըրնար հաւատալ որ այս մարմնոց մէջ արիւն մնացած ըլլայ։ Երբոր դուրս կը հանէին զիրենք, թէպէտ սաստիկ ցաւ կը զգային թշուառները, և այն երկրթէ շղթաներուն ծանրութեանը վիրաւորեալ մարմիններին չէր դիմանար, բայց և այնպէս անընդհատ պոռալէն յոգնած՝ վրանին ալ ուժ չէր մնացած ձայն հանելու։ Ցախ լաւ մը ծեծ ուտելէն վերը՝ այն ծակերուն մէջ ձգուած են եղեր որ հոն մաշին փտին. և յանցանքնին այս էր՝ որ բանտէն փախչիլ ուզեր էին։ Թէպէտ վէրքերնին նեխոտած, և ըզգեստնին ու միսերնին պատառոտած էր, բայց ասոնք իրենց դէմքին քով բան մը չէին։ Երբոր ասանկ խախտեալ անդամներով գետնին վրայ կը տապալուտրկէին, եւրոպայի զինուորները աս տեսնալով արցունքնին չէին կրնար բռնել։ Խեղճերը բոլոր ուժերնին թափելով հազիւ հազ կրնային ըսել թէ անօթի են. մենք լեզունին չէինք հասկրնար, և չէինք գիտեր որ անանկ աչքերնին դուրս ելնալը անօթութենէ առաջ եկած է եղեր։ Ամենք չորս օրուընէ 'ի վեր բան չէին կերած, և կերակուր ուզած ատեննին՝ պատասխանը ծեծ է եղեր. բայց խմելու ջուր ունէին։

„Տարբոյն սկիզբէն սկսեալ այս բանտին մէջ տասնըհինգ հոգիէն աւելի ասխեղձ կերպով մեռեր են։ Կրնամ ըսել թէ ինչուան հիմա չէ եղած մէկը որ Ղինաց բանտերուն որպիսութեանը գաղափար մը տայ, և այս իմ գրածս ալ բուն եղածին քով բան մը ըսել չէ։ Տեսածներնուս մէջ ամենէն աւելի սարսափ ձգող սրահը ասիկայ էր, թէպէտ կային քանի մը հատ ալ որ ասկէ շատ վար չէին մնար։ Մեր տեսած վեց հազար կալանաւորաց մէջ մէկը չկար՝ որուն տեսութիւնը զայրոյթնիս շարժած չըլլայ։ Բ.ոնց մէջ խել մը տղայք ալ կային՝ ինչուան տասը տարեկանէն սկսեալ, որոնք հոն փակուած էին իրենց ծնողացը ապստամբաց կողմն ըլլալուն համար։

„Բոն-Բ.ուի խորշերէն մէկուն մէջ շնորհալի տեսքով տղայ մը ցուցուցին մեզի, որ տասը տարեկան կար, և տախտակի մը վրայ ծունկ չոգած՝ անմեղ կերպով մը կը ծիծաղեր։ Ցշան ըրինք որ մեզի մօտենայ, բայց չեկաւ. որովհետև իր մանրիկ ոտուընները ամիսներէ 'ի վեր շղթայով կապուած ըլլալով՝ բոլորովին զօրութենին կորսնցուցեր էին, որով տեղէն չէր կրնար շարժիլ։ Բ.ռինք զինքը հետերնիս տարինք։

„Երկու օր փնտրուելէն ետև գտանք նաև եւրոպայի կալանաւորաց բանտը. սպառնալիքով ու գիշեր մը բանտելով զբանտապետը՝ ստիպեցինք որ մեզի տեղը ցուցնէ։ Բ.այս բանտը կ'ըսուի Բէօն-Բան, և քաղքին արևելեան մասին մէջ կ'ինայ. մէկալ բանտերէն ասով կը զանազանուի՝ որ չորս կողմը աղիւսէ պատ քաշած է. երկրորդ օրը ամբողջ գրեթէ հոն անցուցինք։ Մինակ մէկ սրահ մը ունի, և կալանաւո-

րաց չէին թողուր որ հոն մտնեն : Սրահին մէկալ ծայրը տաճար մը կայ, որպէս զի ստիպեն զբանտեալներն որ հաւատքնին ուրանան : Իւրաքանչիւր խորշին վրան գեղեցիկ իմաստներով առածներ գրուած են ոսկեզրոշմ գրով. օրինակի համար. “ Թերեւս վաղուան երջանկութեանդ պատճառ մը ըլլայ այսօրուան թշուառութիւնդ „ . — “ Յանցանքնիդ խոստովանեցէք, և շնորհակալ եղիք ատենակալին որ ձեզի թողութիւն կը շնորհէ „ . — “ Արդեօք կայսրը պիտի գթա՞յ վրանիս „ : Սրահին մէջէն դէպ 'ի չորս այլ և այլ խուցեր կը մտցուին, և անոնցմէ ալ ուրիշ չորս խորշերու մէջ : Այս բանտին գլխաւոր բանտապետը անանկ դառն և ժանտ դէմքով մարդ մըն էր, որ կալանաւորները և ոչ կրնային երեսը նայիլ կամ առջևը բան մը զուրցել. բայց երբոր հեռանար բանտէն, կը սկսէին պոռալ. “ Մէկալ բանտապանները զմեզ անօթի միայն կը պահեն ու խստիւ կը վարուին հետերնիս, իսկ ասիկայ միսերնիս ալ կ'ուտէ „ :

„ Երկայն կ'ըլլայ պատմելը թէ ինչպէս պրպրտելով ուզած տեղեկութիւննիս առինք : Ի սկզբան ամէնքը սկսան ուրանալ թէ ամենևին լսած չէին օտարականի մը բանտ մտած ըլլալը. սակայն վերջէն պաշտօնատարներէն մէկը ուժով ապտակ մը ուտելով՝ յիշեց թէ լսեր էր եւրոպացւոյ մը բանտ գտնուիլը : Ետքը բանտապանները նեղը խոթելով, հաւտացուցինք անոնց թէ մենք Գանդոնի մանտարիններն ենք և թէ որ շիտակը խօսին՝ կրնանք զիրենք խալըսել : Ան ատեն ամէնքը սկսան իրենց գիտցածնին ըսել : Մէկը եւրոպական հագուստ մը ցուցուց մեզի. ուրիշ մըն ալ կտաւէ զգեստ մը ունէր : Այս յանցաւորներէն շատը խել մը տարիներէ 'ի վեր բանտ դրուած էին, և եղած արձանագրութեանց մէջ նայելով՝ ստուգեցինք որ թեթև յանցանաց համար էր :

„ Առջի օրը վեց չինացի գլխատուած էին, և ինչպէս որ կ'երևայ՝ մեր մէկալ բանտերուն այցելութեան երթալուն հետևանքովը : Նոյնպէս այս պատերազմիս միջոցները վեց եւրոպացի, երկուքը գաղղիացի և չորսը անգղիացի, այս ահաւոր խորշերուն մէջ սպաննուած էին, որն որ իմացանք ու ստուգեցինք կալանաւորներէն շատին առանձին առանձին հարցընելով այս բանիս վրայ, որոնց ամէնքն ալ մի և նոյն կերպով պատմեցին : Այս եւրոպացիները ամիսներով հոստեղս փակուած մնացեր են չինաց հետ մէկտեղ, և այն սև ու գարշահոտ բրնձէն կ'ուտէին եղեր, որուն հոտը միայն մարդուս սիրտը կը խառնէ : Երբոր սպաննուելու կարգը այդ խեղճերուն եկեր է, բանտապետն իր ձեռքովը լեցուցեր է թոյնը բերներնէն վար : Կալանաւորաց ըսածին համեմատ, երկու եւրոպացի թոյնը չէին ուզած առնել, ու անոր համար խղդեր են զանոնք : Աս ամէն ըսածնին յայտնի ապացոյցներով հաստատեցին :

„ Նմանապէս իմացանք որ եւրոպացի կալանաւորներէն երկու հոգի միայն չինաց սիրելի եղած էին. որոնցմէ մէկը նաւաստի մըն էր, որ իրենց լեզուովը կը խօսէր, իրենց սովորութիւններուն յարմարած էր, և պատմութիւններ կը պատմէր իրենց. բայց վերջապէս ասոր ալ թոյն խմելու կարգն եկաւ, որուն վրայ նոյն իսկ չինացիք սաստիկ տրտմեցան : Իսկ մէկալը ծեր մըն էր՝ ճերմակ մօրուքով, որ քանի մը ամիս հոն կեցեր էր. թէպէտ հազիւ քանի մը չինացի բառ գիտէր, բայց չինք վրան կը գթային, որովհետև ծերերուն մեծ յարգութիւն կու տան : Իսկ ուրիշ եւրոպացիները՝ սիրուած չէին չին կալանաւորներէն „ :

Ահա այս ցաւալի ու բարբարոսական նկարագիրը կու տայ մեզի Նամակիս գրողը, որուն ստուգութիւնը տարակոյս չվերցըներ. որովհետև ուրիշ շատեր ալ քիչ շատ նոյն տեսակ տեղեկութիւններ տուէին Չինաց վրայ : Սակայն մեծապէս յուսալի է որ Եւրոպացւոց այս վերջին պատերազմէն ու դաշնա-

դրութենէն ետքը քիչ մը աւելի լաւնայ այդ մարդկութենէ զուրկ տէրութեան վիճակը՝ եթէ Եւրոպացւոց հսկողութեամբն և եթէ իրենց ու քրիստոնէական կրօնքին հոն ազատութիւն գտնալովը, որ այս նոր դաշնադրութեանս գլխաւոր պայմաններէն մէկն է։

Սիամի թագաւորին ամազոնները։

Սիամի երկրին զինուորութեան մէջ նշանաւոր և հետաքրքրական է Եւրոպացւոց համար կանանց գունդը, որոնք թագաւորին անձնական պահապաններն են։ Այս գունդը բաղկացած է չորս հարիւր կնիկներէ, որոնք աշխարհքին կտրիճ ու վայելուչ օրիորդներուն մէջէն ընտրուած են. առատ ռոճիկ մը կը վայելեն, և զինուորական ընտիր հրահանգով կրթուած են։ Տասուիրեք տարուան հասակին կը մտնան ծառայութեան, և երբոր քսանըհինգ տարուան ըլլան՝ պահեստի գունդը կ'անցնին և ինչուան իրենց մահը արքունական դըղեակներու և տէրութեան կալուածներու պահպանութեանը սահմանուած են։ Ընտրուած ատեննին՝ կուսութեան ուխտ կ'ընեն, զոր ոչ երբեք կրնան լուծել՝ բայց եթէ թէ որ թագաւորն ուզենայ իր օրինաւոր կանանց կարգը դասել անոնցմէ. այս դիպուածը երբեմն կը պատահի, երբոր թագաւորը զինուորական հրահանգներու և զինաշարժութեան մէջ շատ գերազանցած տեսնայ իրենցմէ մէկը։ Այսպիսի փոխարինի մը յոյսը անանկ գովելի նախանձաւորութիւն մը կը ձգէ մէջերնին, որ անհաւատալի է։

Հագուստնին ճոխ է և աղուոր տեսքով. հանդիսի օրեր հագած զգեստնին՝ ճերմակ բուրդէ հանդերձ մըն է ոսկեով ասղնեգործած, որ ինչուան ծունկուընին կը հասնի. զրահէ թեթև կիսազգեստ մը այս հագուստը կ'ամբողջացընէ, և ոսկեզօծ զրահէ լանջապանակ մըն ալ մարմնոյն վերին մասը պաշտպանելու կը ծառայէ. թևերնին ազատ է, որպէս զի կարենան զէնք գործածել. գլուխնին ալ ոսկեզօծ պզտի սաղաւարտ մը կը դնեն։ Այս զգեստը հագած օրերնին՝ նիզակով միայն կը զինուին, զոր մեծ ճարտարութեամբ կը գործածեն։ Իսկ սովորական օրերու հագուստնին շատ աւելի պարզ է, և գլխաւոր զէնքերնին ալ հրացան է, զոր նոյն յաջողակութեամբ կը բանեցընեն։

Կանանց գունդը չորս խումբերու բաժնուած է, որոնց իւրաքանչիւրը հարիւր զինուոր ունի, և ասոնց ամենուն վրայ կը հրամայէ իրենց մէջէն ընտրըւած գնդապետ մը։ Այրք այս գլխաւորնին կը մեռնի, խումբերը մէկտեղ կը հաւաքուին, և իրեք օր զինուորական փորձեր կ'ընեն թագաւորին առջև, որ մէջերնէն ամենէն աւելի յաջողակն ու ընդունակը կ'ընտրէ ան պաշտօնին։

Գնդի գնդապետը, որ վեց տարիէ 'ի վեր այս պատուոյն հասած է, 1851ին թագաւորին կեանքն ազատելու արդիւնքն ունեցած է վագրի որսի մը միջոց։ Արքունեաց մէջ մեծ համարմունք ունի ասիկայ, և ընդարձակ իշխանութիւն մը կը բանեցընէ իր զինուորներուն վրայ։ Արքունական ազգատոհմին իշխաններուն պէս շքեղ ապարանք ունի, և իր անձնական ծառայութեանը համար տասը փիղ։

Թագաւորը ոչ երբեք արշաւանքի մը կ'երթայ առանց իր այս անձնական պահապաններուն գնդին, նոյնպէս ոչ որսի կամ ժուռ գալու կ'ելլայ առանց ուղեկից առնելու ասոնցմէ մէկ մաս մը։ Իւրաքանչիւր զինուորի հինգ սեաւ կանայք կը ծառայեն. ասանկով ներքին հոգերէ ազատ ըլլալով բոլորովին, իրենց արուեստին աշխատութիւններուն կրնան համարձակ ետևէ ըլլալ։ Պաղքին մօտերը կրթութեան դաշտ մը կայ, ուր ամէն շաբաթ իւրաքանչիւր խումբ կ'երթայ և երկու օր նիզակ և սուր գործածելու, ամէն տեսակ հրացանով նշան առնելու, և պատերազմական շարժմունքներու փորձեր կ'ընէ։ Թագաւորն ամէն ամիս ներկայ կ'ելլայ